



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Երևան, Կառավարական փուն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(«Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության 24.05.2017թ. վարչական բողոքը
բավարարելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«12» հուլիսի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 24.03.2017թ.-ի թիվ 16/5 որոշման վերաբերյալ «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության 24.05.2017թ.-ի բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ Բողոք բերած անձ) 24.05.2017թ.-ին բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Գանգատարկման հանձնաժողով)՝ 24.03.2017թ.-ի թիվ 16/5 որոշման վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 24.05.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ 09.02.2017թ. թիվ 6434-17 գրությամբ Գանգատարկման հանձնաժողովին բողոքարկել է ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ նաև Խոշոր հարկ վճարողների ՀՏ) 13.12.2016թ.-ի թիվ 5013176 ստուգման ակտի (այսուհետ՝ նաև Ակտ) «Շահութահարկ» բաժնի 1-ին, 2-րդ և

3-րդ կետերով Ընկերությանը վերագրված խախտումների, ինչպես նաև հիշյալ խախտումների հիմքով լրացուցիչ հաշվարկված հարկային պարտավորությունների առաջադրման իրավաչափությունը:

Գանգատարկման հանձնաժողովի 24.03.2017թ.-ի թիվ 16/5 որոշմամբ գանգատը բավարարվել է մասնակի և անվավեր է ճանաչվել Ակտի 1-ին բաժնի 3-րդ կետը, իսկ նույն բաժնի 1-ին և 2-րդ կետերը թողնվել են անփոփոխ:

Բողոք բերած անձը որպես բողոքի փաստական և իրավական հիմքեր նշել է, որ՝

- Գանգատարկման հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 7-րդ և 42-րդ հոդվածներով ակտիվների և եկամուտների ճանաչման առումով հստակ սահմանված են առանձնահատկություններ, որոնք տարբերվում են հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ տրվող կարգավորումներից, հիմնավոր չէ, ուստի այն եզրահանգումը, որ վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի են ոչ թե հաշվապահական հաշվառման, այլ Օրենքի վերոհիշյալ հոդվածներով սահմանված դրույթները, չի բխում օրենքից: Մասնավորապես, Գանգատարկման հանձնաժողովը նշելով, որ ակտիվների և եկամուտների ճանաչման առումով Օրենքով հստակ սահմանված են առանձնահատկություններ, որոնք տարբերվում են հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ տրվող կարգավորումներից, անտեսել է այն փաստը, որ Օրենքի իմաստով եկամուտ է համարվում ակտիվների աճը կամ պարտավորությունների նվազումը, **որոնք հանգեցնում են սեփական կապիտալի ավելացմանը:** Մինչդեռ, Օրենքի 7-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 11.03.2010թ. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» թիվ 235-Ն որոշման (ՀՀ կառավարության 11.07.2013թ. թիվ 770-Ն որոշման խմբագրությամբ) հավելվածի 4-րդ գլխի 4.4-րդ կետի «ա» ենթակետի, 4.25-րդ կետի «ա» ենթակետի, 4.37-րդ, 4.38-րդ կետերի վերլուծությունից հետևում է, որ հետհաշվեկշռում հաշվառված տոկոսների հաշվարկումը թե՛ Օրենքով, և թե՛ հաշվապահական հաշվառման վերաբերյալ կանոններով չի կարող հանգեցնել Ընկերության սեփական կապիտալի փոփոխության: Այս առումով Օրենքի և վերոնշյալ կանոնների մոտեցումը նույնական է և այն հանգամանքը, որ հաշվապահական հաշվառման ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն՝ ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ դրա մասով ակնկալվում են ապագա տնտեսական օգուտներ, չի կարող դիտվել որպես Օրենքի 3-րդ

հողվածի իմաստով սահմանված առանձնահատկություն: Ուստի, հիմք ընդունելով Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված կանոնը, ակտիվների և եկամուտների ճանաչման առումով կիրառելի են հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքները և կանոնները, մասնավորապես՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներն ու դրանց ուղեցույցները: Բացի այդ, խնդրո առարկա հարցը հստակ կարգավորվում է նաև ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 23.04.1999թ.-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգով (այսուհետ՝ նաև Կարգ):

- Ընկերության կողմից ուղղված հարցումներին ՀՀ կենտրոնական բանկի 03.02.2017թ. թիվ 06.4-20-19/000203-17/081 «բգ» գրությամբ տրված պատասխանը ևս մեկ անգամ հաստատում է, որ հետհաշվեկշռային հաշիվներում տոկոսների, տույժերի և տուգանքների հաշվեգրումը ենթակա չէ թղթակցման եկամտային հաշիվների հետ և կազմակերպության համար եկամուտ չի հանդիսանում:

- Ի կատարումն ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականի՝ ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2017թ. թիվ 0402/2-4/6512-17 գրությունը ևս հաստատում է, որ հետհաշվեկշռային հաշիվներում հաշվառված ակտիվների նկատմամբ հետհաշվեկշռում գտնվելու ժամանակահատվածում բանկերի կողմից հաշվարկված տոկոսները, տույժերը և տուգանքները շահութահարկով հարկման նպատակով եկամուտ կարող են համարվել միայն այն դեպքում, երբ դրանց դիմաց բանկերը ստանում են վճարում (հատուցում):

- Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենսդրության համաձայն՝ ակտիվների կամ եկամուտների ճանաչման առումով կարևոր նշանակություն ունի դրանց հետ կապված ցանկացած ապագա տնտեսական օգուտի՝ կազմակերպություն ներհոսելու հավանականությունը: Հետևաբար, այդ հավանականության նվազման կամ վերացման արդյունքում հետհաշվեկշռ տեղափոխված ակտիվի նկատմամբ հաշվարկվող լրացուցիչ գումարների հաշվին տնտեսական օգուտի ներհոսքի հավանականությունը նույնպես բացակայում է, հետևաբար, այդ գումարները չեն համապատասխանում եկամուտ կամ ակտիվ ճանաչվելու վերաբերյալ վերոնշյալ կանոնին և կարող են այդպիսին ճանաչվել միայն այն

դեպքում, երբ վերականգնվի այդ գումարներից տնտեսական օգուտները կազմակերպություն ներհոսելու հավանականությունը: Կարգի 4.1-րդ, 4.5-րդ, 6.1-րդ և 6.5.1-րդ կետերի վերլուծությունից ակնհայտ է, որ անհուսալի ճանաչվելուց հետո վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը (հաշվեկշռում գրանցված գումար, ներառյալ տվյալ ակտիվի գծով հաշվեգրված տոկոսներ, տույժեր և տուգանքներ) դուրս է գրվում հաշվեկշռից և դադարում է արտացոլվել Ընկերության հաշվեկշռում: Ընկերությունը դադարում է անհուսալի ճանաչված վարկերը և դեբիտորական պարտքերը հաշվառել որպես ֆինանսական, ինչպես նաև հարկային ակտիվներ, հետևաբար դրանց գծով հետագայում հետհաշվեկշռում հաշվարկված տույժերն ու տուգանքները նույնպես վերջինիս համար ֆինանսական, ինչպես նաև հարկային ակտիվներ չեն ձևավորում: Հետևաբար, խոսք չի կարող լինել ակտիվների ներհոսքի, սեփական կապիտալի փոփոխության և հարկվող եկամտի մասին:

- Ֆինանսական և հարկային ակտիվների, և հետևաբար նաև հարկվող եկամտի բացակայության պարագայում Գանգատարկման հանձնաժողովի կողմից վկայակոչված Օրենքի 43-րդ հոդվածը, որը վերաբերում է եկամտի ճանաչման պահին, տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ չի կարող ճանաչման հարց առաջանալ, եթե առկա չէ եկամուտ:

- Գանգատարկման հանձնաժողովի պնդումն առ այն, որ Կարգը կիրառվում է բացառապես դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, անհուսալի ճանաչման ու դուրսգրման նպատակով, չի բխում Կարգի դրույթներից, քանի որ՝

ա) Կարգը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ հաստատված փաստաթուղթ է,

բ) Կարգը բացի ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների վարկերի և դեբիտորական պարտքերի (ակտիվների) դուրսգրման հարցերի կարգավորումից հստակ սահմանում է նշված գործընթացների հետ կապված հաշվապահական հաշվառման մոտեցումները,

գ) Ակտով արձանագրվել է Կարգի՝ շահութահարկի հաշվարկին վերաբերող 6.5.1-րդ և 6.5.3-րդ կետերի խախտում:

Հետևաբար, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը փորձում է օգտագործել Կարգի միայն այն դրույթները, որոնք բխում են իր շահերից՝ անտեսելով Կարգի՝ բանկերի համար կարևորություն ունեցող այլ դրույթները:

- Ակտի 1-ին բաժնի 2-րդ կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանում նշված չեն այն իրավական նորմերը, որոնց պահանջները խախտվել են, ինչպես նաև սխալ է մեկնաբանվել Օրենքը: Հետևաբար, Ակտի վիճարկվող կետը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 42-րդ, 43-րդ, 55-րդ և 57-րդ հոդվածների պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝

ա) Գանգատարկման հանձնաժողովի և ստուգումն իրականացրած հարկային տեսուչների կողմից խախտվել է վարչական ակտի հիմնավորվածության պահանջը, քանի որ վերջիններս ընդհանրական հղում կատարելով Օրենքի առանձնահատկություններին և հաշվապահական հաշվառման կանոնների կիրառելի չլինելուն՝ չեն հիմնավորել արտահաշվեկշռում հաշվառվող վարկերի տուգանային տոկոսների դուրսգրման դեպքում եկամուտ ճանաչելու պարտավորության առաջացման հանգամանքը:

բ) Գանգատարկման հանձնաժողովը և ստուգումն իրականացրած հարկային տեսուչները վարչական վարույթի ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և քննարկման ապահովման իրենց պարտականությունը չեն կատարել: Մասնավորապես, վերջիններս պարտավոր էին անդրադառնալ Կարգով սահմանված՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններին:

գ) Գանգատարկման հանձնաժողովի կողմից համակողմանի հիմնավորված չէ վերջինիս եզրահանգումն առ այն, որ Կարգը կիրառելի է բացառապես դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, անհուսալի ճանաչման և դուրսգրման նպատակով, այն դեպքում, երբ Կարգը սահմանում է շահութահարկի հաշվառման մի շարք էական կարգավորումներ:

դ) Վարչական մարմնի կողմից որևէ կազմակերպության լրացուցիչ պարտավորություն առաջադրելու դեպքում անհրաժեշտ է, որ վերջինիս վերագրված խախտումը պատշաճ կերպով արձանագրվի ստուգման ակտում և ապացուցվի, ինչի պարտավորությունը կրում է վարչական մարմինը:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոք բերած անձը խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 24.03.2017թ.-ի թիվ 16/5 որոշումը՝ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 13.12.2016թ. թիվ 5013176 ստուգման ակտի 1-ին բաժնի 2-րդ կետն անփոփոխ թողնելու մասով և անվավեր ճանաչել Խոշոր հարկ վճարողների ՀՏ 13.12.2016թ. թիվ 5013176 ստուգման ակտի 1-ին բաժնի 2-րդ կետը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի հունիսի 29-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էին Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Աստղիկ Դրամբյանը և Ընկերության ներկայացուցիչներ Վահագն Միքայելյանը և Ներսես Ներսիսյանը:

Ա. Դրամբյանը պնդեց բողոքով ներկայացված պահանջը և դրա վերաբերյալ հիմնավորումները՝ ավելացնելով, որ առաջնորդվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջով, տարընկալումները պետք է մեկնաբանվեն հոգուտ հարկ վճարողի և առաջադրված հարկային պարտավորությունները պետք է վերացվեն:

Բողոք բերած անձի ներկայացուցիչ Ներսես Ներսիսյանը նշեց, որ ֆինանսական հաշվառման և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում առկա տարբերությունները քննարկվող գործարքների վրա չեն ազդում, քանի որ ակտիվը կամ եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ կա ակտիվների ներհոսք, պարտավորությունների պակասեցում, որոնք բերում են սեփական կապիտալի ավելացման: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վարկերը դուրս են գրվել հետհաշվեկշիռ, իսկ հետհաշվեկշիռը հաշվեկշռային հոդվածների հետ չի թղթակցում:

Ինչ վերաբերում է ՀՀ ԿԲ խորհրդի 23.04.1999թ.-ի թիվ 63 որոշմամբ հաստատված կարգին (այսուհետ՝ նաև Կարգ), ապա դրանում առկա է հստակ կարգավորում, որը սահմանում է, թե ինչպես հաշվառել հետհաշվեկշռում հաշվարկվող ակտիվների վրա հաշվեգրված տոկոսների դուրսգրումը:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- ՀՀ ֆինանսների նախարարի 02.02.2016թ.-ի թիվ 5013176 հանձնարարագրի հիման վրա 18.03.2016-25.11.2016թթ. ընկած ժամանակահատվածում Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

- Ստուգման արդյունքում 13.12.2016թ.-ին կազմվել է թիվ 5013176 ստուգման ակտը, որի «Շահութահարկ» բաժնի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով շահութահարկի գծով խախտումներ են արձանագրվել 2012թ., 2013թ. և 2014թ. հաշվետու ժամանակաշրջանների համար և Ընկերությանը շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել 292.876.375 ՀՀ դրամի չափով գումար:

- **Ակտի «Շահութահարկ» բաժնի 2-րդ կետի համաձայն.** «Քանկը 2013 և 2014թթ.-ի ընթացքում թվով 5 վարկառուներին զիջել է նախկինում անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքերի գծով հաշվեգրված տուգանային տոկոսները, գումարով համապատասխանաբար՝ 18.900.832 և 7.396.331 ՀՀ դրամ չավելացնելով այդ նույն հաշվետու ժամանակաշրջանների հարկվող եկամուտները: Ընկերությունը պատճառաբանել է, որ այդ տույժերը հաշվեգրվել են արտահաշվեկշռում և ենթակա չեն որպես եկամուտ ավելացման, զիջման հաշվետու ժամանակաշրջանում (ֆինանսական վերահսկողության բաժնի կառավարչի կողմից 07.11.2016թ.-ին տրված տեղեկանքը կցվում է), մինչդեռ՝

ա) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ հաշվեգրման եղանակով եկամուտների հաշվառումն իրականացվում է ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահից՝ անկախ եկամուտի փաստացի ստացման ժամկետից,

բ) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ՀՀ կառավարության լիազորած մարմնի և ՀՀ կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով՝ պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումների գերազանցող գումարի չափով,

գ) ՀՀ ԿԲ խորհրդի 23.04.1999թ.-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի 6.5.1 կետի համաձայն՝ եթե բանկի հետհաշվեկշռային հաշիվներում հաշվառվող ակտիվը (կամ դրա մի մասը) դուրս է գրվել հետհաշվեկշռային հաշիվներից անհատույց զիջման կամ ներման արդյունքում, որով փոխառուի (պարտապանի) նկատմամբ բանկի պահանջի իրավունքը դադարել է, ապա շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի

հաշվետրու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է այդ ակտիվի գումարի չափով,

դ) Կարգի 2.1 կետի համաձայն՝ բանկի պահանջների գծով հաշվեգրված և չվճարված փույժերը և փուզանքները նույնպես համարվում են ակտիվներ (վարկեր և դեբիտորական պարտքեր):

Վերոհիշյալ իրավական նորմերով (կամ հարկային հարաբերությունները կարգավորող որևէ իրավական ակտով) բանկերի կողմից անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքերի գծով փոկոսների կամ փույժերի՝ որպես եկամուտ չհաշվեգրելու կամ այդ փույժերը միայն հետհաշվեկշռում հաշվեգրելու որևէ պահանջ սահմանված չէ և դրանք մինչև անհուսալի ճանաչելը հաշվեկշռում պետք է ճանաչվեին որպես դեբիտորական պարտքեր, քանի որ այդ եկամուտների ստացման իրավունքը բանկի կողմից ձեռք է բերվել պայմանագրերին համապատասխան: Տույժերի գծով դեբիտորական պարտքերը հաշվեկշռում ճանաչելուց հետո, Կարգին համապատասխան, դրանք ենթակա են անհուսալի ճանաչման և համախառն եկամտից նվազեցման: Կարգի 4.5 կետի համաձայն՝ անհուսալի ճանաչելուց հետո ակտիվները (փվյալ դեպքում ակտիվի մայր գումարը, փոկոսները և փույժերը) պետք է հաշվառվեին հետհաշվեկշռում և 6.5.1 և 6.5.3 կետերի պահանջով դրանք անհատույց զիջելու կամ ներելու դեպքում նույն գումարի չափով պետք է ավելացվեր բանկի հաշվետրու ժամանակաշրջանի հարկվող եկամուտը, ինչը բանկը չի կատարել:

Խստիվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ժգ» ենթակետը, ինչպես նաև ՀՀ ԿԲ խորհրդի 23.04.1999թ.-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի 6.5.1 և 6.5.3 կետերը, որի արդյունքում բանկի կողմից 2013 և 2014թթ.-ի համար հարկային տեսչություն ներկայացված շահութահարկի հաշվարկում հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել համապատասխանաբար՝ 18.900.832 և 7.396.331 ՀՀ դրամ գումարի չափով:»:

- Ակտի վերջնամասում առկա է Ընկերության գործադիր տնօրեն Փոլ Էդգարի մակագրությունը հետևյալ բովանդակությամբ. «Ակտի հետ համաձայն չեմ, ունեմ առարկություն: Կրողքարկեմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում»:

- Ընկերությունը 09.02.2017թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին բողոք է ներկայացրել՝ պահանջելով ամբողջությամբ

անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 13.12.2017թ.-ի թիվ 5013176 ստուգման ակտը:

- Ակտի դեմ բերված գանգառի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովի 24.03.2017թ.-ի թիվ 16/5 որոշմամբ Ընկերության գանգատը բավարարվել է մասնակի՝ անվավեր է ճանաչվել խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.03.2016թ.-ի թիվ 5012041 ստուգման ակտի 1-ին բաժնի 3-րդ կետը, իսկ նույն բաժնի 1-ին և 2-րդ կետերը թողնվել են անփոփոխ:

- Ընկերությունը 14.12.2016թ. թիվ 16614 և 19.12.2016թ. թիվ 16635 գրություններով ՀՀ կենտրոնական բանկին հարցումներ է ուղղել Կարգի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.02.2007թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի որոշ դրույթների առնչությամբ:

- Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ **ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ Մ. Աբրահամյանի 03.02.2017թ. թիվ 06.4-20-19/000203-17/081 «բգ» գրությամբ** տրվել է պատասխան հետևյալ բովանդակությամբ. «Բանկի կողմից Կարգի շրջանակներում անհուսալի ճանաչված և հաշվեկշռից դուրս գրված ակտիվների գծով արտահաշվեկշռային հաշիվներում գտնվելու ընթացքում հաշվարկված տոկոսների, տույժերի և տուգանքների վերաբերյալ կարծում ենք, որ վերջիններիս գրանցումն արտահաշվեկշռում ենթակա չէ թղթակցման եկամտային հաշիվների հետ և չի հանդիսանում ճանաչված եկամուտ կազմակերպության համար: Նման պնդման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ եթե անհուսալի ճանաչված միջոցների գծով անգամ մայր գումարի վերադարձը դրված է կասկածի տակ, ապա մայր գումարի գծով արտահաշվեկշռում հաշվարկված տոկոսների, տույժերի և տուգանքների ստացման հավանականությունը շատ փոքր է: Հետևաբար, համաձայն ՖՀՄՍ-ների, նման գումարները չեն կարող դիտվել որպես հավանական օգուտների ներհույս և չեն համապատասխանում եկամուտների ճանաչման պահանջներին:

Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ դուրս գրված ակտիվի գծով վճարումներ ստանալիս կազմակերպությունը վճարման չափով իրականացնում է հաշվեկշռում ակտիվի և դրա գծով նախկինում ձևավորված պահուստի վերականգնում, այնուհետև ճանաչում է ակտիվի մարում: Այն դեպքերում, երբ վճարումները ստացվում են արտահաշվեկշռային հաշիվներում հաշվառման արդյունքում ձևավորված միջոցների

գծով, կատարվում է համապատասխան եկամտային հոդվածի ավելացում՝ մեծացնելով հարկման ենթակա եկամուտների ծավալը:

Հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ մոտեցումն ամրագրված է Կարգի 4.5 և 6.1 կետերով:»:

- Ընկերությունը նույն հարցադրման շուրջ նամակ է ուղղել նաև ՀՀ վարչապետին, որի արդյունքում ի կատարումն ՀՀ վարչապետի 04.04.2017թ. թիվ 02/23.2/8436-17 հանձնարարականի ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Դ. Անանյանի կողմից Ընկերությանն ուղղված 11.04.2017թ. թիվ 02/2-4/6512-17 գրությամբ ներկայացվել է քննարկվող հարցի հետ կապված ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի դիրքորոշումը:

- ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշման համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը քննարկել է Ընկերության կողմից բարձրացված հարցը (ակտիվի հետհաշվեկշռում հաշվառման ընթացքում հաշվարկված տոկոսները, տույժերը և տուգանքները անհատույց զիջելու կամ ներելու դեպքում այդ գումարների չափով հարկվող եկամտի ավելացման վերաբերյալ) և վերլուծելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության «ա» և 2-րդ մասի «ժզ» ենթակետերի, Կարգի 4.5-րդ, 6.1-րդ, 6.5.1-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 11.03.2010թ. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» թիվ 235-Ն որոշման (ՀՀ կառավարության 11.07.2013թ. թիվ 770-Ն որոշման խմբագրությամբ) հավելվածի 4.25-դ կետի «ա» ենթակետի, 4.38-րդ կետի պահանջները, նշել է, որ. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտահաշվեկշռում հաշվառված ակտիվների նկատմամբ հաշվարկված լրացուցիչ գումարների հաշվին բանկեր տնտեսական օգուտներ կարող են ներհոսել գործնականում դրանց դիմաց հատուցում ստանալու դեպքում, շահութահարկի հաշվարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ և հաշվապահական հաշվառումն ու ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենսդրությամբ արտահաշվեկշռում հաշվառված դեբիտորական պարտքերի նկատմամբ արտահաշվեկշռում հաշվառման ժամանակահատվածում բանկերի կողմից հաշվարկված տոկոսները, տույժերը և տուգանքները եկամուտ ճանաչելու առումով ամրագրված մոտեցումներն ամբողջությամբ նույնական են: Հետևաբար, հետհաշվեկշռային հաշիվներում հաշվառված ակտիվների նկատմամբ հետհաշվեկշռում գտնվելու ժամանակահատվածում բանկերի կողմից հաշվարկված

տրոկոսները, տույժերը և տուգանքները շահութահարկով հարկման նպատակով եկամուտ կարող են համարվել միայն այն դեպքում, երբ դրանց դիմաց բանկերը ստանում են վճարում (հատուցում):»:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի դիրքորոշման համաձայն՝ «Եկամուտները ճանաչվում են հաշվեգրման եղանակով՝ ելնելով եկամտի ստացման իրավունքը ձեռք բերելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացումից, ինչը նշանակում է, որ Օրենքի 7-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներին համապատասխան հաշվեկշռային հաշիվներում հաշվառվող ակտիվների նկատմամբ հաշվեգրված տրոկոսները, տույժերը և տուգանքները հանդիսանում են եկամուտ (ակտիվ), անկախ այն հանգամանքից, որ Կարգի համաձայն՝ հետհաշվեկշռային հաշիվներում հաշվառվող ակտիվների նկատմամբ տրոկոսների, տույժերի և տուգանքների հաշվարկման որևէ դրույթ նախատեսված չէ»:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման** հետևյալ հիմնավորմամբ.

Հանձնաժողովը գտնում է, որ սույն բողոքի քննության համար էական է հետևյալ հարցադրումներին անդրադառնալը՝

- քննարկվող գործի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 23.04.1999թ.-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» հավանություն տալու մասին» թիվ 63 որոշման պահանջները ենթակա՝ են արդյոք կիրառման շահութահարկի հաշվարկման նպատակով տնտեսավարող սուբյեկտի եկամուտների որոշման համար.

- Բողոք բերած անձը պարտավոր էր արդյոք հետհաշվեկշռում հաշվառված դեբիտորական պարտքերի նկատմամբ հետհաշվեկշռում հաշվառման ժամանակահատվածում բանկերի կողմից հաշվարկված տոկոսները, տույժերը և տուգանքները արտացոլել հաշվեկշռում՝ դրանք այնուհետև անհուսալի ճանաչելու և հետհաշվեկշռում հաշվառելու նպատակով:

Առաջին հարցադրման առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, որ Կարգը հարկային

հաշվառման առումով կիրառվում է բացառապես դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, անհուսալի ճանաչման և դուրս գրման նպատակով, չի բխում օրենսդրական կարգավորումներից՝ հետևյալ հիմնավորմամբ. **«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ **շահութահարկը որոշելիս** հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե սույն օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Սույն օրենքի իմաստով՝

ա) եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը.:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝

ժգ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով **նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի** մարման գումարները կամ **դուրս չգրված դեբիտորական պարտքերի** մարման դեպքում՝ սահմանված կարգով պահուստին կատարված մասհանումների գումարները, իսկ **բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց դեպքում՝** Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով **նախկինում հաշվեկշռից դուրս գրված անհուսալի ակտիվների և ինվեստիցիոն արժեթղթերի՝ հաշվեկշռում վերականգնման արդյունքում հաշվեգրված եկամուտները**, իսկ հաշվեկշռից դուրս չգրված ակտիվների դեպքում՝ սահմանված կարգով ձևավորված պահուստների նվազեցման գծով հաշվեգրված եկամուտները:

Օրենքի վերոհիշյալ կարգավորումներից հետևում է, որ քննարկվող գործի շրջանակներում առկա է եկամտի կոնկրետ տեսակի դրսևորում՝ կապված հաշվեկշռից դուրս գրված անհուսալի ակտիվների և դրանց նկատմամբ հաշվեգրված տոկոսների, տուգանքների հետ: Նշված եզրահանգումն անմիջականորեն բխում է Ակտի

«Շահութահարկ» բաժնի 2-րդ կետում ամրագրված խախտման ձևակերպումից, համաձայն որի. «*Բանկը 2013 և 2014թթ.-ի ընթացքում թվով 5 վարկառուներին զիջել է նախկինում անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքերի գծով հաշվեգրված տուգանային տոկոսները, գումարով համապատասխանաբար՝ 18.900.832 և 7.396.331 ՀՀ դրամ չավելացնելով այդ նույն հաշվետու ժամանակաշրջանների հարկվող եկամուտները»:*

Եկամտի նշված տեսակն իր հերթին ենթադրում է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժգ» կետով սահմանված այնպիսի հասկացությունների կիրառում, ինչպիսիք են՝ «նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր», «նախկինում հաշվեկշռից դուրս գրված անհուսալի ակտիվներ», որոնց բացահայտումը միայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հնարավոր չէ և նկատի ունենալով նշված հասկացությունների բացահայտումը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 23.04.1999թ.-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» հավանություն տալու մասին» թիվ 63 որոշման շրջանակներում, գտնում ենք, որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի ուժով հարկ է առաջնորդվել հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքներով և կանոններով:

Ընդ որում, նշված հանգամանքը հավաստվում է նաև անմիջականորեն հարկային մարմնի կողմից Ակտում և Գանգատարկման հանձնաժողովի կողմից որոշման մեջ Կարգով սահմանված իրավական կարգավորումների կիրառմամբ՝ ի հիմնավորումն իրենց դիրքորոշման, մասնավորապես եկամուտներ ճանաչելու մասով՝ կապված Կարգի 6.5.1. և 6.5.3. կետերի կիրառման հետ:

Հանձնաժողովը երկրորդ հարցադրման առնչությամբ էական է համարում անդրադարձը Գանգատարկման հանձնաժողովի հետևյալ դիրքորոշմանը. «*հիմք ընդունելով Օրենքի 42-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 2.1.-րդ և 6.5.1.-րդ կետերի կարգավորումները, հարկային հարաբերությունները կարգավորող որևէ իրավական ակտով բանկերի կողմից անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքերի գծով տոկոսների կամ տույժերի որպես եկամուտ չհաշվեգրելու կամ այդ տույժերը միայն հետհաշվեկշռում հաշվեգրելու որևէ պահանջ սահմանված չէ և դրանք, մինչև անհուսալի ճանաչելը, հաշվեկշռում պետք է ճանաչվեին որպես դեբիտորական պարտքեր, քանի որ*

այդ եկամուտների ստացման իրավունքը բանկի կողմից ձեռք է բերվել պայմանագրերին համապատասխան: Տույժերի գծով դեբիտորական պարտքերը հաշվեկշռում ճանաչելուց հետո, Կարգին համապատասխան, դրանք ենթակա են անհուսալի և ճանաչման և համախառն եկամտից նվազեցման: Կարգի 4.5-րդ կետի համաձայն, անհուսալի ճանաչելուց հետո ակտիվները (տվյալ դեպքում ակտիվի մայր գումարը, տոկոսները և տույժերը) պետք է հաշվառվեն հետհաշվեկշռում և 6.5.1. և 6.5.3. կետերի պահանջով դրանք անհատույց զիջելու կամ ներելու դեպքում նույն գումարի չափով պետք է ավելացվեր բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտը, ինչը բանկը չի կատարել: Խախտվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ժգ» ենթակետը, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 63 որոշմամբ հաստատված կարգի կարգի 6.5.1 և 6.5.3-րդ կետերը, որի արդյունքում բանկի կողմից 2013թ. և 2014թ. համար հարկային տեսչություն ներկայացված շահութահարկի հաշվարկում հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել համապատասխանաբար՝ 18.900.832 և 7.396.331 դրամի չափով»:

Նշված դիրքորոշմամբ Գանգատարկման հանձնաժողովն ըստ էության ընդունել է այն փաստը, որ Կարգի 6.5.1 և 6.5.3-րդ կետերին համապատասխան շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվի այն գումարի չափով, որով ակտիվը (ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները) դուրս է գրվել հաշվեկշռից, այսինքն եկամուտների որոշումն իրականացվում է Կարգով սահմանված պայմանների առկայության դեպքում, ինչից ելնելով էլ կարևորել է հետհաշվեկշռում գտնվող դեբիտորական պարտքերին հաշվեգրվող տոկոսները և տուգանքները դեբիտորական պարտք ձևակերպելու և հաշվեկշռում հաշվառելու, այնուհետև միայն հետհաշվեկշռում արտացոլելու փաստը:

Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի դիրքորոշումը հիմնավոր չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ **եկամուտ է համարվում** հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը, իսկ **«գ» կետի** համաձայն՝ **ակտիվ է համարվում** հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային

իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, **դեբիտորական պարտքը** և այլ գույքը: Նշված ձևակերպումից հետևում է, որ Օրենքը թվարկում է ակտիվ համարվող հնարավոր միջոցները, սակայն չի բացահայտում դրանց բնորոշ հատկանիշները, որոնց ուժով դրանք դիտարկվում են ակտիվ, ինչն իր հերթին իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով: Մասնավորապես, **Կարգի 2.1. կետի** համաձայն, **վարկեր և դեբիտորական պարտքեր (այսուհետև՝ ակտիվներ)** են համարվում **բանկի հաշվին (ռիսկով) տեղաբաշխված վարկերը**, **սույն կետում նշված պահանջների գծով հաշվեգրված և չվճարված տոկոսները, տույժերը, տուգանքները**, ինչպես նաև բանկի համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները:

«Կառավարության 11.03.2010թ. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» թիվ 235-Ն որոշման հավելվածի 4.4. կետի համաձայն՝ **ակտիվը միջոց է, որը վերահսկվում է կազմակերպության կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և որից ապագա տնտեսական օգուտները ակնկալվում է, որ կհոսեն դեպի կազմակերպություն:**

Նշվածից հետևում է, որ Գանգատարկման հանձնաժողովի դիրքորոշումը, համաձայն որի՝ Օրենքի 7-րդ հոդվածը հանդիսանում է առանձնահատուկ կարգավորում, որի առկայության դեպքում չեն գործում հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքները և այլ իրավական ակտերը, չի համապատասխանում օրենսդրության վերոհիշյալ կարգավորումներին, որոնք ենթադրում են միևնույն իրավահարաբերության կարգավորմանն ուղղված և միմյանց փոխլրացնող նորմերի ամբողջություն:

Հանձնաժողովը կիրառելի համարելով «Կառավարության թիվ 235-Ն որոշմամբ սահմանված «ակտիվ» հասկացությունը, գտնում է, որ որպես ակտիվ հաշվեկշռում արտացոլման են ենթակա այն միջոցները՝ ներառյալ դեբիտորական պարտքը, որը համապատասխանում է ակտիվներին ներկայացվող պահանջին, այն է՝ առկա է կազմակերպության կողմից ապագա տնտեսական օգուտների ակնկալիք:

Նշվածի առնչությամբ հարկ է նշել, որ Կարգի 2.1. կետի համաձայն՝ որպես **դեբիտորական պարտք են համարվում այն չվճարված տոկոսները, տույժերը, տուգանքներն, որոնք հաշվեգրվում են** հիմնական պարտավորության գծով (վարկեր,

բանկի ռիսկով ակտիվային այլ գործառնությունների (արժեթղթերում ներդրումներից՝ միայն մուրհակների) գծով ստացվելիք գումարներ և այլն): Նշվածից հետևում է, որ տույժերը, տուգանքները և տոկոսները սերտորեն փոխկապակցված են հիմնական պարտավորությանը և վերջինիս հատկորոշումները չեն կարող չանդրադառնալ նաև ածանցյալ պարտավորություններին:

Մասնավորապես, **Կարգի 3.10.-րդ կետի** համաձայն՝ **անհուսալի ակտիվներն անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված ակտիվներն են, որոնց հաշվառումը հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ:** Այս դասակարգումը չի նշանակում, որ ակտիվը հնարավոր չէ վերականգնել ապագայում, բայց **դրա հաշվապահական ճանաչումը տվյալ պահին պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ:**

Նշված ձևակերպումից հետևում է, հիմնական պարտավորությունը և դրա վրա հաշվեզրկված տոկոսները մինչև հետհաշվեկշռում արտացոլվելը համապատասխանել են ակտիվներին ներկայացվող պահանջներին և սկսած այն պահից, երբ Կարգին համապատասխան ճանաչվում են անհուսալի, կորցնում են ակտիվներին բնորոշ յուրահատկությունը, այն է՝ տնտեսական օգուտի ակնկալիքը, որպիսի պարագայում դրանց արտացոլումը հաշվեկշռում որպես ակտիվ, ըստ Կարգի 3.10.-րդ կետի, կորցնում է իր նպատակահարմարությունը՝ համարվելով արժեզրկված, ինչն էլ իր հերթին Օրենքով հիմք է հանդիսանում նշված ակտիվների մասով նվազեցում կատարելու համար:

Դրանից իր հերթին բխում է, որ այն տոկոսները և տուգանքները, որոնք հաշվեզրկվում են արդեն իսկ արժեզրկված և բանկի հաշվեկշռում արտացոլման ոչ ենթակա դեբիտորական պարտքի գծով, ի սկզբանե չեն կարող գնահատվել որպես տնտեսական օգուտի ակնկալիք ձևավորող միջոցներ, որպիսի պարագայում կորցնում են հաշվեկշռում արտացոլման ենթակա ակտիվներ հանդիսանալու իրենց հատկանիշը:

Նշվածից հետևում է, որ Գանգատարկման հանձնաժողովի դիրքորոշումը՝ նշված տուգանքները, տոկոսները ի սկզբանե հաշվեկշռում արտացոլելու և ապա որպես նվազեցում դրանք հետհաշվեկշիռ տեղափոխելու վերաբերյալ, անհիմն է, ինչն էլ իր հերթին հանգեցնում է դրանց անհատույց զիջման կամ ներման պարագայում որպես եկամուտ հարկման ենթակա լինելու հնարավորությունից՝ հիմք ընդունելով Կարգի 6.5-րդ կետի կարգավորումները:

Մասնավորապես, **Կարգի 6.5.1.-րդ կետի** համաձայն՝ **եթե բանկի հետհաշվեկշռային հաշիվներում հաշվառվող ակտիվը (կամ դրա մի մասը) դուրս է**

գրվել հետհաշվեկշռային հաշիվներից մինչև սույն կարգի 6.4-րդ կետի 2-5-րդ ենթակետերով սահմանված հիմքերի ի հայտ գալը **ակտիվի (կամ դրա մի մասի) անհատույց գիջման կամ ներման արդյունքում, որով փոխառուի (պարտապանի) նկատմամբ բանկի պահանջի իրավունքը դադարել է**, ապա շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի **հարկվող եկամուտն ավելանում է այդ ակտիվի (կամ դրա մի մասի) գումարի չափով**:

Կարգի 6.5.3.-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 6.5.1-րդ և 6.5.2-րդ կետերի համաձայն՝ շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի **հարկվող եկամուտն ավելանում է արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվի այն գումարի չափով, որով ակտիվը** (ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները) **դուրս է գրվել հաշվեկշռից**:

Վերոհիշյալ իրավական կարգավորումների արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ հետհաշվեկշռում հաշվառված դեբիտորական պարտքերի գծով առաջացած տույժերը, տուգանքները և տոկոսները չեն կարող գնահատվել որպես ավելացման ենթակա եկամուտ, քանի որ դրանք արտացոլված չեն եղել և համապատասխանաբար դուրս չեն գրվել բանկի հաշվեկշռից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Հանձնաժողովը գտնում է, որ ինչպես ստուգումն իրականացրած հարկային տեսչությունը, այնպես էլ Գանգատարկման հանձնաժողովը սխալ են մեկնաբանել և կիրառել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի սույն որոշման շրջանակներում քննարկված պահանջները, ինչի արդյունքում Գանգատարկման հանձնաժողովը կայացրել է ոչ իրավաչափ որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝

ա) սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության 24.05.2017թ.-ի բողոքը բավարարել. բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 24.03.2017թ. թիվ 16/5 որոշումը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 13.12.2016թ. թիվ 5013176 ստուգման ակտի 1-ին բաժնի 2-րդ կետն անփոփոխ թողնելու վերաբերյալ և կայացնել նոր վարչական ակտ հետևյալ բովանդակությամբ. «Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 13.12.2016թ. թիվ 5013176 ստուգման ակտի 1-ին բաժնի 2-րդ կետը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ